Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Ներքին Գետաշենի Ա.Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց

Թեմա՝ ԱՈՒՊ-ով աշխատելու կարևորությունը

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցչի օգնական՝ Տաթևիկ Գրեյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……..3

Գլուխ I

Ներառական կրթություն……....6

Գլուխ II

Ի՞նչ է Անհատական ուսուցման պլան……10

Եզրակացություն…….……...20

Գրականության ցանկ……..……21

# *Ներածություն*

Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է: Կրթության առանձնահատուկ պայմանները անձի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև՝ մանկավարժական և սոցիալական ծառայությունների ամբողջությունն է: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձը ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձն է, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ: Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցությունն է, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին: Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող, կրթությանն աջակցող մանկավարժահոգեբանական ծառայություններ մատուցող կազմակերպությունն է: Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը անձի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկման, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտման և կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանման գործընթացների ամբողջությունն է: Ֆինանսավորման բարձրացված չափաքանակը Հայաստանի Հանրապետության կառավարության

սահմանած նվազագույն ֆինանսավորման չափ է, որն անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման համար:

Անհատական ուսուցման պլանը հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները:

Ուսուցչի օգնականը կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատող է: Մանկավարժական աշխատողը սովորողների կողմից հանրակրթական ծրագրերի յուրացմանը նպաստող և կրթության բովանդակության պահանջներն ապահովող ուսումնական հաստատության, ինչպես նաև՝ մանկավարժահոգեբանական կենտրոնների աշխատակից: Հաշմանդամությունը առողջական խնդիրներ ունեցող անձանց ու շրջակա միջավայրի արգելքների փոխազդեցության հետևանք է, որը խոչընդոտում է նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքի լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը: Հաշմանդամություն ունեցող անձինք են համարվում նրանք, որոնք երկար ժամանակ տառապում են ֆիզիկական, հոգեկան, մտավոր և նյարդային հիվանդություններով, որոնք տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում կարող են խոչընդոտել, որ նրանք լիակատար և արդյունավետ մասնակցեն հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով:

ԱՈՒՊ-ը հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները: ԱՈՒՊ-ը մշակվում է միայն այն երեխայի համար, ով ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և առանց անհրաժեշտ ծրագրային պարզեցումների և հարմարեցումների չի կարող հասնել իր կրթության նպատակներին:

ԱՈՒՊ-ի թիմի կազմավորումը առավել հավանական է ունենալ խելամտորեն պլանավորված ԱՈՒՊ այն դեպքում, երբ հետագայում ԱՈՒՊ-ը իրականացնող բոլոր

անձինք ԱՈՒՊ-ի շուրջ թիմային համագործակցության մաս են կազմում՝ սկսած այս փուլից: Որպես կանոն՝ ԱՈՒՊ-ի թիմի անդամների շարքին են դասվում տնօրենը, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը ուսուցիչ(ներ)ը, ուսուցիչների օգնականները, հատուկ մանկավարժը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, եթե դպրոցում թիմի վերջին երեք անդամները չկան, ապա նրանք հրավիրվում են տվյալ ուսումնական հաստատության տարածքը սպասարկող տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնից:

Մեր կարծիքով ԱՈՒՊ- ները իրենց նպատակին կծառայեն այն դեպքում, երբ բացի միայն փաստաթուղթ ընկալվելուց, ԱՈՒՊ-ից օգտվողներն ու գործածողները այն ընկալեն որպես գործիք, որը կհեշտացնի իրենց աշխատանքը ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատելիս:

Մեր հետազոտական աշխատանքի կազմված է բովանդակությունից, ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

Մատնանաշել դպրոցում ներառական կրթության կարևորությունը և ճիշտ ընկալումը:

Առանձնակի ուշադրություն հրավիրել ԱՈՒՊ-ով ճիշտ աշխատելու կարևորության վրա:

Մատնանշել յուրաքանչյուր երեխայի՝ իր կարիքներին ու կարողություններին համապատասխան, կրթության կարևորությունը:

# *Գլուխ I*

## *Ներառական կրթություն*

Ներառական կրթություն (ֆր.՝ Inclusif – ներփակված, լատ.՝ include - ներառված), կրթական համակարգ, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածության ապահովմանը: Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար: Ներկայումս Հայաստանում ներառական կրթությունը թևակոխում է զարգացման նոր շրջան, քանի որ նախկինում առկա մարտահրավերները կապված հատուկ կարիքով երեխայի հասարակության կողմից ընդունման հետ կարելի է համարել հաղթահարված: Հատկանշական է, որ ներկայումս կարելի է փաստել՝ աջակցող թիմի մասնագիտական վերապատրաստումները ունեցել են իրենց դրական արդյունքը, և հիմա նաև մասնագիտական աջակցող թիմերն են ավելի պատրաստված և մասնագիտորեն ավելի կոմպետենտ օգնելու հատուկ կարիքով երեխային կրթության կազմակերպման և սոցիալական ադապտացիայի հարցում: Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին վավերացնելով ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, ստանձնել է միջազգային պարտավորություն՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներին: Արժևորելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման, դաստիարակության, բնականոն զարգացման և սոցիալական ինտեգրման խնդիրները՝ հատուկ ուսումնական հաստատությունների բարեփոխումները հիմնված են երկու հիմնարար սկզբունքների վրա՝ կրթության մատչելիություն և որակ, հետևաբար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին՝ իրենց անհատական կրթական կարիքին համապատասխան, ներառական որակյալ կրթությամբ ապահովելը դարձել է օրակարգային հարց: Այս ուղղությունների իրականացման նպատակով ընդունվել են մի շարք իրավական ակտեր, փոփոխություններ են առաջարկվել «Կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում, 2005 թ. «Կրթության առանձնահատուկ

պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի ընդունումով սահմանվեց «ներառական կրթություն» 4 հասկացությունը: Համաձայն նշված օրենքի՝ «Ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ»: 2007 թվականից սկսած ընդլայնվում է պետականորեն ճանաչված ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների ցանցը: Այսօր Հայաստանի Հանրապետությունում 117 հանրակրթական դպրոցներ իրականացնում են ներառական կրթություն, այնտեղ սովորում են շուրջ 2700 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն: Ներառական կրթության կայացումը առողջ հասարակության ձևավորման կարևոր մասերից է, քանի որ այն ենթադրում է հասարակության յուրաքանչյուր օղակի լիարժեք ընդունում և ներուժի օգտագործում: Հայաստանում կրթության ոլորտի զարգացման գործում նոր և կարևորագույն շրջան սկսվեց ներառական կրթության ներդրումից հետո, քանի որ կրթության կազմակերպման հիմնաքարը մարդասիրական ավելի խորը ու հիմնավոր գաղափարների ներդրումն է:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

• Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցերում:

• Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից:

• Երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը՝ առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման: Ներառական կրթությունն այժմ համարվում է յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն: Այս տեսանկյունից յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի որակյալ կրթության ապահովմանը խոչընդոտող գործոններ կարող են լինել իր կարողություններին չհամապատասխանող կրթական ծրագրերը, ուսումնական նյութերը, ուսուցիչների վերաբերմունքը, միջավայրի ֆիզիկական խոչընդոտները: Նշված արգելքները վերացնելուց հետո երեխայի համար կրթական ծրագրերի մատչելիությունը լիարժեքորեն ապահովվում է: Հետևաբար, ՀՀ-ում յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի որակյալ կրթության ապահովմանն ուղղված քաղաքականությունը պետք է հիմնականում կենտրոնանա միջավայրային խոչընդոտների վերացման և հավասար հնարավորությունների ստեղծման ուղղությամբ:

Ներառական կրթության համակարգում առանձնահատուկ կարևոր են երեխայի մասին տեղեկատվության փոխանակումն ու ճշգրիտ գնահատումը, ուստի մանկավարժական կազմը պետք է կարողանա գնահատել և ամեն ինչ կազմակերպել՝ ելնելով երեխայի կարիքի վերաբերյալ տեղեկությունից: Մեր աշխատանքն է

հասկանալ՝ ինչ է պետք երեխային, և ինչ կարողություններ ունի: Կրթական կարիքի ճշգրիտ գնահատումը ենթադրում է արդյունավետ միջամտություն, որն էլ նպաստում է կրթական նպատակների իրագործմանը: Պետք է հստակ տեսնել, թե որտեղ է երեխան և որոշել, թե որն է հաջորդ քայլը: Գնահատումը կարելի է և պետք է կատարել ամեն օր, ամեն շաբաթ, քանզի միայն այս ձևով կարող ենք ճանաչել երեխայի հնարավորությունները: Պետք է տեսնել, թե որտեղ է երեխան, պետք է կարողանալ «կարդալ» երեխային և անհրաժեշտության դեպքում փոփոխել դասավանդման եղանակները, սակայն մինչ աշակերտին գնահատելը պետք է գնահատել դասի պլանը, որն ունի 2 չափանիշ՝ ուսումնական պլանի բարդության աստիճանը և միջավայրի կազմակերպումը: Պետք է գնահատել, թե որքանով է առաջադրանքն արդյունավետ աշակերտի համար, որքանով է մատչելի և համապատասխան վերջինիս կարողություններին:Առաջադրանքի կազմման համար մանկավարժական թիմը պետք է կարողանա պատասխանել 3 հիմնական հարցի. Ի՞նչ սովորեցնել: Ինչպե՞ս սովորեցնել: Ինչպիսի՞ իրական ակնկալիքներ ունենալ: Գնահատումը տվյալների հավաքագրումն է, որի նպատակն աշակերտի վերաբերյալ որոշում կայացնելն է: Երբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան չի հասցնում ծրագիրը և զգալիորեն ետ է մնում հասակակիցներից, մենք սկսում ենք մտածել, որ երեխան չի կարողանում սովորել և ավելի քիչ ենք ընդգրկում դասապրոցեսում: Իրականում կրթական խնդիրների մեծամասնությունը պայմանավորված է աշակերտի հանդեպ մեր ակնկալիքների և նրա ընդունակության անհամապատասխանությամբ: Ընդ որում ակնկալիքները կարող են երեխայի ընդունակություններից ինչպես բարձր լինել, այնպես էլ ցածր: Ցածր սովորաբար լինում են, երբ երեխայի տարբերությունը հասակակիցներից ակնհայտ է և արտաքինից տեսանելի: Պատկերը լիովին փոխվում է, երբ ստուգում ենք երեխայի իրական կարողությունները, գրանցում իրական խնդիրը և նոր միայն առաջադրանքը կառուցում՝ հիմնվելով երեխայի կարիքի մասին մեր գիտելիքի վրա: Սա առանցքային մոտեցում է, քանի որ, եթե ճիշտ մոտեցմանը զուգահեռ իրականացվի գնահատում, ապա ակնհայտ կդառնա, որ աշակերտի կողմից գրանցվել է տեղաշարժ, ինչը շատ կարևոր է ինչպես նրա, այնպես էլ ուսուցչի համար: Շատ հաճախ, երբ երեխան զարգացման որևէ առանձնահատկություն է ունենում, ուսուցիչներից շատերը պիտակավորում են որպես «խնդիրով երեխա» և հակվում են ընդհանրացնելու այդ

«խնդիրը», ինչն էլ ավելի է բարդացնում աշխատանքը: Իրականում ամեն ինչ շատ ավելի հեշտ կլինի, եթե փորձենք վերհանել այն խնդիրները, որոնք խանգարում են երեխայի ուսումնառությանը և դասապրոցեսին ներգրավմանը, պարզենք այն հնարավորություններն ու կարողությունները, որոնք երեխան ունի, ապա վերլուծենք և գտնենք տարբերակներ դասապրոցեսը բոլորի համար արդյունավետ դարձնելու համար: Գնահատման տեսակները «Երբ խոհարարը փորձում է ապուրը, դա ձևավորող գնահատում է , իսկ երբ հյուրերն են փորձում՝ ամփոփիչ»: Ռոբերտ Ստեյկ, Իլնիուս համալսարանի դասախոս Դպրոցում կիրառվում է երկու տեսակի գնահատում ՝ ձևավորող (ֆորմատիվ) և ամփոփիչ (սումատիվ): Ամփոփիչ գնահատումը վերահսկում է ուսման որակը, որոշում է աշակերտների առաջադիմության մակարդակը՝ հանրակրթության պետական չափորոշչով նախատեսված ծրագրերի սահմանած նպատակների համաձայն: Այսպիսով, ամփոփիչ գնահատումը կատարվում է ծրագրի վերջում՝ հաստատելու համար, որ աշակերտները յուրացրել են ծրագրի նպատակները: Ամփոփիչ գնահատման ժամանակ դրվում է միավոր: Ձևավորող գնահատումը ստուգում է յուրաքանչյուր աշակերտի զարգացման դինամիկան և նպաստում ուսման որակի բարելավմանը: Այն սովորաբար կատարվում է տարվա սկզբում և ընթացքում՝ այսպիսով հնարավորություն ընձեռնելով տվյալ առարկայի դասավանդման որոշակի պահերին նյութի յուրացման վերաբերյալ անմիջապես պատկերացում կազմելու:

## *Գլուխ II*

## *Ի՞նչ է Անհատական ուսուցման պլանը*

ԱՈՒՊ հապավումը նշանակում է անհատական ուսուցման պլան: Անհատական ուսուցման պլանը լրացվում է դպրոցի և մանկավարժահոգեբանական տարածքային կենտրոնի կողմից սահմանված կարգով գնահատված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի համար: Սովորողի համար անհատականացված ծրագրերով ուսուցման կազմակերպման վերաբերյալ որոշում է կայացնում դպրոցի մանկավարժական խորհուրդը՝ հիմք ընդունելով ԱՈՒՊ-ով տվյալ աշակերտի կրթությունը կազմակերպելու նրա ծնողի դիմումը և ուսուցիչների ու մանկավարժահոգեբանական աջակցության մասնագիտական խմբի համատեղ

եզրակացությունը՝ հիմնված երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման բոլոր փուլերում հավաքված տեղեկատվության վերլուծության վրա: Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված՝ ըստ հանրակրթության աստիճանների, կրթության բովանդակության նվազագույն պահանջները ուսուցչի համար բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության կազմակերպման համար ելակետային դրույթներ են: ԱՈՒՊ-ը մշակվում է միայն այն աշակերտի համար, ով ունի կրթության առանձնահատուկ պայմանների առանձնապես խիստ կարիք և առանց անհրաժեշտ ծրագային պարզեցումների և հարմարեցումների չի կարող հասնել իր կրթության նպատակներին: ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի համաձայն՝ ԱՈՒՊ-ը «…հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները»: Այս նոր մոտեցումների արդյունքում, իրականում, ԱՈՒՊ-ի կարիք կունենան միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն աշակերտները, որոնց կողմից անհնարին է հասնել «հանրակրթության պետական չափորոշիչով» սահմանված հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջների ապահովմանը: Նրանց համար այդ պահանջները պարզեցվում, հարմարեցվում են աշակերտի մտավոր և ֆիզիկական կարողությունների առավելագույն ներուժին համապատասխան: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ տվյալ աշակերտի համար ԱՈՒՊ-ով կրթությունը կազմակերպելու որոշումը կայացվի բոլոր կողմերի համաձայնությամբ՝ ծնող, աշակերտ, ուսուցիչ, մանկավարժահոգեբանական աջակցության խումբ, տնօրեն: Աշակերտը կարող է ունենալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, որը դեռևս բավարար հիմք չէ նրա կրթությունն ԱՈՒՊ-ով կազմակերպելու համար: Այս աշակերտների մեծ մասը համապատասխան առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման պարագայում կարող է բավարարել «հանրակրթության պետական չափորոշիչով» սահմանված հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջները: ԱՈՒՊ-ի օրինակելի ձևը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Աշակերտի անձնական տվյալներ։
- Աշակերտի մասին ընդհանուր ճանաչողական տեղեկատվություն, ներառյալ այն ուսումնական բնագավառները, որտեղ դրսևորվում են նրա ուժեղ կողմերը։
- Աշակերտի մոտ առկա դժվարությունները, ֆունկցիաների՝ ձայնի և խոսքի, լսողական, տեսողական, ինտելեկտուալ-մտավոր, շարժողական, ըստ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկություն։
- Առողջական վիճակի մասին բժշկական անհրաժեշտ տեղեկություն։
- Զարգացման ենթակա ուսումնական բնագավառները և թիրախային հմտությունները։
- Աշակերտի տարեկան նպատակները՝ ըստ առարկայական ծրագրերի յուրաքանչյուր ուսումնական առարկայի ուսուցանվող թեմայի ավարտին։
- Կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումների իրականացումն ըստ առարկայական ծրագրերի։
- Սահմանված նպատակադրումներին հասնելու կամ դրանց ուղղությամբ կատարված առաջընթացի գնահատում։
- Առաջընթացի գնահատման թիրախային ժամկետներ։
- Մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրում՝ ըստ աշակերտի մանկավարժահոգեբանական ծառայությունների անհատական պլանի (ՄԱԾԱՊ)։
- Կրթության առանձնահատուկ պայմաններ, հարմարեցումներ։
- Հաջորդ ուսումնական տարվա համար առաջարկներ կամ ըստ կրթության աստիճանների անցումային պլաններ՝ հիմնված ուսումնական տարեվերջյան ամփոփիչ գնահատման վրա։
- ԱՈՒՊ-ի տարեկան վերջնարդյունքների և կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումների և իրականացման պլանի վերանայման ժամկետներ։
- ԱՈՒՊ-ի վերաբերյալ լրացուցիչ մեկնաբանություններ և դիտողություններ։
- ԱՈՒՊ-ի մշակմանը մասնակցած խմբի անդամներ են դպրոցի ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալը, ուսուցիչներ, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամներ, ուսուցչի օգնական, ծնող։

- ԱՈՒՊ-ը մշակվում է մեկ ուսումնական տարվա համար: Աշակերտի տարեկան վերջնարդյունքները և կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումները ուսումնական տարվա ընթացքում ցանկացած ժամանակ կարող են անհրաժեշտ փոփոխությունների ենթարկվել: Դրանք կարող են ուսուցչի կողմից վերանայվել յուրաքանչյուր թեմայի դասավանդման գործընթացում: Ելնելով ԱՈՒՊ-ում սահմանված՝ աշակերտի տարեկան վերջնարդյունքներից և կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումներից՝ աշակերտի ցուցաբերած առաջադիմությունը պարբերաբար կգնահատվի ողջ տարվա ընթացքում ամփոփիչ աշխատանքների միջոցով նույն հաճախականությամբ, ինչ նախատեսվում է առանց ԱՈՒՊ-ով սովորողների համար:

Պարտադիր չէ, որ ԱՈՒՊ-ի թիմի բոլոր անդամները միաժամանակ ներգրավվեն ԱՈՒՊ-ի բոլոր փուլերի մշակման գործընթացին: Տնօրենը, օրինակ, կարող է ներգրավված լինել ըստ անհրաժեշտության, սակայն փոխտնօրենի մասնակցությունը բոլոր փուլերում անհրաժեշտ է: Ինչ վերաբերում է ուսուցիչներին, ապա նույնպես պարտադիր չէ, որ տվյալ սովորողի բոլոր ուսուցիչները միաժամանակ ներգրավված լինեն այս աշխատանքներում: Հետագայում ուսումնական գծով փոխտնօրենը՝ մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների հետ միասին առանձին-առանձին կաշխատի մյուս առարկայական ուսուցիչների հետ՝ տվյալ առարկայի համար սովորողի տարեկան վերջնարդյունքի, նպատակադրումների և գործողությունների պլանավորումների մասով: Յուրաքանչյուր սովորողի ԱՈՒՊ-ի մշակման համար թիմում ներգրավվում է մեկ կամ երկու ուսուցիչ, ովքեր ակտիվորեն ներգրավված են եղել սովորողի դիտարկման և գնահատման գործընթացներում և լավ ճանաչում նրա ուժեղ և թույլ կողմերը: Թե որ ուսուցիչը կամ ուսուցիչները պետք է ներգրավված լինեն ԱՈՒՊ-ի թիմում՝ կօգնեն հետևյալ ուղենշող հարցերը, օրինակ, թե ով է ամենալավը ճանաչում սովորողին,ով կարող է արժեքավոր դիտողություններ, դիտարկումներ կատարել այն մասին, թե ինչն է իսկապես կարևոր տվյալ սովորողի ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու համար, ով է տիրապետում այն գիտելիքներին ու հմտություններին, որն անհրաժեշտ են հաջող և արդյունավետ ԱՈՒՊ մշակելու և դրանով սովորողի ուսուցման գործընթացն իրականացնելու համար: Վերոնշյալ հարցերի պատասխանները կօգնեն կազմավորել տվյալ սովորողի ԱՈՒՊ-ի մշակման

այնպիսի թիմ, որն ամենայն հավանականությամբ խելամտորեն կմշակի համակարգված ԱՈՒՊ: Հակառակ դեպքում կկազմավորվի թիմ, որի անդամները պարզապես նշանակվում են՝ որպես տվյալ սովորողի ԱՈՒՊ-ի թիմի անդամներ, քանի որ դա մտնում է պաշտոնային նկարագրերի մեջ: Կարևոր է այն, որ ԱՈՒՊ-ի թիմի բոլոր անդամները հստակորեն հասկանան ու պատկերացնեն իրենց պարտականությունները թիմում, գիտակցեն, որ հետագայում նաև պատասխանատու են տվյալ սովորողի համար իրենց կողմից մշակված ԱՈՒՊ-ի իրականացման ընթացքի, ԱՈՒՊ-ով հաստատված՝ սովորողի տարեկան վերջնարդյունքների ձեռքբերման ուղղությամբ նրան ցուցաբերվող առաջադիմության շարունակական դիտարկման և գնահատման համար: ԱՈՒՊ-ի թիմի բոլոր անդամները պետք է նաև հստակ գիտենան, թե իրենցից ինչ է ակնկալվում, ինչպես, օրինակ՝ թե ինչ հաճախականությամբ պետք է ԱՈՒՊ-ի թիմի հանդիպումները տեղի ունենան, թե ինչպիսին պետք է լինի տվյալ ԱՈՒՊ-ի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացը:

**Դպրոցի տնօրեն՝**

Սովորողի ԱՈՒՊ-ի կազմման համար առաջնային պատասխանատվությունը կրում է դպրոցի տնօրենը: ԱՈՒՊ-ի մասով դպրոցի տնօրենն ապահովում է՝

- Ծնողի մասնակցությունը ԱՈՒՊ-ի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու գործընթացին:
- Ծնողի ստորագրությամբ հաստատված համաձայնությունը՝ մշակված ԱՈՒՊ-ն իրականացնելու համար:
- Աշակերտին տրամադրվող համապատասխան մանկավարժահոգեբանական աջակցությունների ծավալները, տևողությունն ու ժամանակահատվածը:
- Աշակերտի ԱՈՒՊ-ի իրականացման համար անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության, հարմարեցված նյութերի և պարագաների տրամադրումը:
- Ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների մասնակցությունը տարբեր դասընթացների և վերապատրաստումների՝ զարգացնելու և ամրապնդելու նրանց մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները՝ դպրոցում ներառական կրթական գործընթացը բարելավելու նպատակով:

- Սովորողի ԱՈՒՊ-ի մշակման, իրականացման և գնահատման ողջ գործընթացը նպատակաուղղված է հասնելու նրա կրթության վերջնարդյունքներին և երկարաժամկետ նպատակներին:

**Դպրոցի տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալը** տնօրենի հետ միասին առաջնային պատասխանատվություն է կրում սովորողի ԱՈՒՊ-ի գործնական կիրառման գործընթացներում՝ հանդիսանալով այդ բոլոր աշխատանքների և ԱՈՒՊ-ում ներգրավված բոլոր կողմերի միջև արդյունավետ և թիմային համագործակցության գլխավոր համակարգողը:

- Մասնակցում է ԱՈՒՊ-ի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին:
- Համակարգում է ԱՈՒՊ-ի աշխատանքները՝ հստակ ներկայացնելով ԱՈՒՊ-ի խմբի յուրաքանչյուր անդամի դերը, պարտականությունն ու համագործակցությունը՝ ԱՈՒՊ-ի տարեկան նպատակների և խնդիրների իրականացման հարցերում:
- Ապահովում է աշակերտի ընթացիկ և կիսամյակային ամփոփիչ գնահատման գործընթացի պատշաճ իրականացումը:
- Ապահովում է, որպեսզի պատշաճ իրականացվեն ԱՈՒՊ-ով առաջարկված և դպրոցի տնօրենի կողմից հաստատված կրթության առանձնահատուկ պայմանների հարմարեցումների և մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրումը սովորողին:
- Ուսուցչի օգնականի կողմից ԱՈՒՊ-ի վարման պատասխանատվությամբ, իր տնօրինության տակ է պահում բոլոր ԱՈՒՊ-ները և ապահովում դրանցում տեղ գտած տեղեկատվության գաղտնիությունը՝ առանց ծնողի համաձայնության այն չտրամադրելով երրորդ անձի:
- Հրավիրում և անձամբ համակարգում է աշակերտի ԱՈՒՊ-ի իրականացման խմբի անդամների ամսական ժողովները:

**Դասղեկը** առաջնային պատասխանատվություն է կրում աշակերտի ԱՈՒՊ-ով պլանավորված տվյալ առարկայական ծրագրի հարմարեցման, իրականացման և արդյունքների գնահատման համար: Այս պատասխանատվությունը սկսվում է ԱՈՒՊ-ի մշակման փուլից և շարունակվում է ԱՈՒՊ-ի իրականացման և գնահատման

փուլերում: Ուսուցիչը նաև հանդիսանում է տվյալ աշակերտի համար ԱՈՒՊ-ը սահմանելու որոշման կայացման գլխավոր դերակատարներից մեկը:

- Մյուս ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներին, դպրոցի տնօրինությանը և ծնողին տեղեկություն է տրամադրում աշակերտի առաջադիմության մասին:
- Դիտարկումների միջոցով բացահայտում և մատնանշում է աշակերտի ուժեղ և թույլ կողմերը:
- Մասնակցում է աշակերտի տվյալ առարկայի տարեկան նպատակների և ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումների մշակմանը:
- Պլանավորում և իրականացնում է աշակերտի ԱՈՒՊ-ով հարմարեցված առարկայական ծրագիրը, մշակում է աշակերտի առաջադիմության գնահատման մեթոդներն ու եղանակները:
- Գնահատում է կիսամյակային և տարեկան արդյունքները:
- Շարունակական կապ է պահպանում աշակերտի մյուս ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների և ծնողի հետ:
- Մյուս ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամներին, դպրոցի տնօրինությանը և ծնողին առաջարկություններ է ներկայացնում կրթության առանձնահատուկ պայմանների և հարմարեցումների վերաբերյալ:

**Մանկավարժահոգեբանական աջակցության թիմի հատուկ մանկավարժ, հոգեբանը, սոցիալական աշխատող.**

Մանկավարժահոգեբանական աջակցության խումբը աշխատում է ցանկացած աշակերտի հետ, ում մոտ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատմամբ պարզվել է այս կամ այն ֆունկցիայի որևէ աստիճանի խանգարում, որը դժվարացնում է, իսկ որոշ դեպքերում գրեթե անհնար է դարձնում աշակերտի կողմից իր ԱՈՒՊ-ով սահմանված տարեկան վերջնարդյունքներին և նպատակադրումներին հասնելը՝ առանց լրացուցիչ հատուկ մանկավարժական, հոգեբանական և սոցիալականացմանը միտված աջակցության տրամադրման: Մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամները՝

- Սովորողների ԱՈւՊ-ի մշակման, իրականացման ու գնահատման խմբի անդամ են:
- Մշտական տեղեկատվություն են տրամադրում ուսուցիչներին և աշակերտի ծնողին սովորողի ուժեղ կողմերի և դժվարությունների մասին:
- Մասնակցում են սովորողի մշտադիտարկման, ուսումնառության ընթացիկ, կիսամյակային ու տարեկան գնահատման գործընթացներին:
- Պլանավորում և իրականացնում են հատուկ մանկավարժական, հոգեբանական և սոցիալականացմանը միտված աջակցության ծառայություններ՝ գրառումներ կատարելով ԱՈւՊ-ի համապատասխան բաժիններում,
- Խորհրդատվություն և անմիջական օժանդակություն են տրամադրում ուսուցիչներին՝ «հանրակրթության պետական չափորոշիչով», առարկայական չափորոշիչներում ու ծրագրերում սահմանված բովանդակային նվազագույն պահանջները ԱՈւՊ-ում պարզեցնելու և աշակերտի մտավոր և ֆիզիկական կարողությունների առավելագույն ներուժին հարմարեցնելու աշխատանքներում:
- Խորհրդատվություն են տրամադրում ուսուցիչներին և ուսուցչի օգնականներին՝ կրթության համար անհրաժեշտ առանձնահատուկ պայմանների և ծրագրային հարմարեցումների, հատուկ մանկավարժական ռազմավարությունների և մեթոդների, նյութերի և ռեսուրսների ընտրության վերաբերյալ:
- Տնօրինության համաձայնությամբ և հանձնարարությամբ կարող են իրականացնել սովորողի կրթությանը խոչընդոտող՝ հոգեբանական, սոցիալական և անհրաժեշտ աջակցության ծառայություններ:

**Ուսուցչի օգնական.**

Ուսուցչի օգնականը ԱՈւՊ-ի մշակման և գործարկման ողջ ընթացքում կապող օղակ է հանդիսանում է տվյալ աշակերտի առարկայական ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների, ծնողի և տվյալ աշակերտի միջև՝ փոխանակելով նրանց հետ ցանկացած տեղեկատվություն՝

կապված աշակերտի ուսումնական առաջընթացի և դեռևս առկա խնդիրների հետ: Ուսուցչի օգնականը ԱՈւՊ-ի տարեկան նպատակներին և խնդիրներին ուղղված գործողությունների իրականացման ընթացքում ուսուցչի անմիջական աջակիցն է և ուսուցիչների կողմից սովորողի ԱՈւՊ-ի պատշաճ լրացման աշխատանքների համակարգողը:

- Ուսուցչի օգնականը ուսուցչի ուղղորդմամբ աշակերտներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կապված ուսուցման գործընթացների և նոր հանձնարարությունների հետ:
- Ուսուցիչների համաձայնությամբ ԱՈւՊ-ի համապատասխան բաժնում պլանավորում է իր կողմից աշակերտին տրամադրվող աջակցությունները:
- Տվյալ աշակերտի առարկայական ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներին և ծնողին տեղեկատվություն է տրամադրում նախկինում կիրառված արդյունավետ կամ ոչ բավարար չափով արդյունավետ ուսուցման և ուսումնառության ռազմավարությունների մասին:
- Օգնում է ուսուցիչներին դասի պլանավորման և ուսումնամեթոդական նյութերի պատրաստման ու տրամադրման հարցերում:
- Մշտադիտարկում և ԱՈւՊ-ի համապատասխան բաժիններում արձանագրում է ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումների՝ ուղղությամբ աշակերտի արձանագրած հաջողություններն ու առաջընթացը, ինչպես նաև դեռևս առկա թերացումները:
- Մշտապես մասնակցում է ԱՈւՊ-ի վերաբերյալ խմբային ժողովներին, ինչպես նաև մշտադիտարկման, ընթացիկ գնահատման և կիսամյակային ու տարեկան ամփոփիչ գնահատման գործընթացներն:

**Ծնող.**

Աշակերտի ծնողը ԱՈւՊ-ի համագործակցային թիմի անդամ է: Նրա ներգրավվածությունը պետք է սկսվի իր երեխայի համար իրատեսական և նպատակահարմար անհատական ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման փուլից և շարունակվի ԱՈւՊ-ի մշակման և դրա իրականացման փուլերում: Ծնողի մասնակցությամբ մշակվող ԱՈւՊ-ը առավել իրատեսական է, քանի որ այն պլանավորելիս հաշվի են առնվում աշակերտի մասին ծնողի տրամադրած շատ

կարևոր տեղեկություններ երեխայի առողջության, տանը և համայնքում երեխայի դրսևորած նախասիրությունների, հետաքրքրությունների և հմտությունների վերաբերյալ, ինչպես նաև ներառում են ծնողի կողմից սովորողի ուսուցման գործընթացի կամավոր հանձնառությունները: ԱՈՒՊ-ի իրականացման ընթացքում ծնողը հանդիսանում է ոչ միայն իր երեխայի շահերի լավագույն պաշտպանը, այլև կարևոր դերակատարում ունի դպրոցում սովորած գիտելիքների և հմտությունների գործնական կիրառման, ամրապնդման, ընդհանրացման և պահպանման հարցում՝ շարունակելով այդ աշխատանքները նաև տանը:

**Աշակերտ.**

ԱՈՒՊ-ի առանցքը և ողջ գործընթացի բոլոր փուլերի կենտրոնը աշակերտն է, ուստի նրա հնարավոր մասնակցությունը ԱՈՒՊ-ի մշակման գործընթացներին շատ օգտակար կլինի արդյունավետ և իրատեսական փաստաթուղթ ունենալու համար: Աշակերտի ներգրավվածության բնույթն ու աստիճանը կարող են տարբեր լինել՝ կախված մի շարք գործոններից, ինչպիսիք են, օրինակ՝ տարիքը, հասկանալու և հաղորդակցվելու կարողությունը: Էական նշանակություն ունի նաև այն, որ ուսուցիչները, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներն ու ծնողներն աշակերտին օգնեն հնարավորինս լավ հասկանալու իր ուսուցման պլանավորման նպատակադրումները: Հնարավորության դեպքում սովորողը կարող է՝

- Մասամբ կամ լիարժեքորեն մասնակցել իր ԱՈՒՊ-ի մշակման, իրականացման և գնահատման գործընթացներին:
- Ինքնագնահատման միջոցով բացահայտել և մատնանշել իր նախասիրությունները և ուժեղ կողմերը:
- Մասնակցել իր կրթության երկարաժամկետ նպատակների և տարեկան վերջնարդյունքների սահմանմանը,
- Մասնակցել իր ԱՈՒՊ-ի քննարկումներին՝ ներկայացնելով իր ուսումնառության առաջընթացը խթանող կամ խոչընդոտող գործոնները:
- Ինքնուրույն կամ որոշակի աջակցությամբ գնահատել իր գրանցած առաջընթացը: ԱՈՒՊ-ի մշակման գործընթացին կարող են մասնակցել նաև աշակերտի ընկերները, քույրը կամ եղբայրը:

Կարևոր է հիշել, որ ԱՈՒՊ-ը պետք է լինի տվյալ ուսումնական տարվա ընթացքում սովորողի կրթության կազմակերպման համար առաջնահերթությունների ամփոփ նկարագիրը՝ կապված երեխայի՝ տվյալ առարկայի տարեկան նպատակների շուրջ որոշումներ կայացնելու, թիրախային հմտությունների շրջանակները որոշելու և կարճաժամկետ խնդիրներ սահմանելու և դրանց իրականացման ռազմավարություններ մշակելու համար: ԱՈՒՊ-ի մշակումը և գրի առնելը՝ մուտքագրելը, կենտրոնանում է գրավոր ԱՈՒՊ-ի պատրաստման վրա: Այս գործընթացն իրականացվում է ԱՈՒՊ-ի օրինակելի ձևի էլեկտրոնային տարբերակի վրա: ԱՈՒՊ-ի օրինակելի ձևում ընդհանրացված է հանրակրթության տարրական, հիմնական և միջնակարգ մակարդակների և առարկայական ծրագրերից բխող տարեկան նպատակների, սովորողի զարգացման ենթակա բնագավառների, թիրախային հմտությունների, խնդիրների և դրանց իրականացման ռազմավարությունների առումով: ԱՈՒՊ-ի թիմը դրանք պետք է որոշակիացնի ըստ սովորողի կրթության մակարդակի և նրա համար սահմանված տարեկան նպատակների: ԱՈՒՊ-ի էլեկտրոնային տարբերակում գրի են առնվում արդեն սևագրված և վերջնականացված ձևակերպումները: ԱՈՒՊ-ում գրի են առնվում սովորողի անձնական տվյալները և նրա մասին ընդհանուր տեղեկությունները և երկարաժամկետ նպատակները: ԱՈՒՊ-ի խումբը, ըստ առարկայական ծրագրերի, սահմանում և գրի է առնում սովորողի համար պատշաճ և նպատակահարմար տարեկան նպատակները և ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումները, խնդիրները և դրանց իրականացման ռազմավարությունը, ինչպես նաև անհրաժեշտ հարմարեցումները և աջակցության եղանակները: Ամբողջ տեղեկատվությունը գրանցվում է ԱՈՒՊ-ի էլեկտրոնային օրինակելի ձևում, որից հետո այն տպվում և ստորագրվում է ԱՈՒՊ-ի թիմի անդամների և գործընթացի բոլոր մասնակիցների կողմից, ինչպես նշված է օրինակելի ձևում: Ապա այն հաստատվում է դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից:

**ԱՈՒՊ-ով աշխատելու կարևորությունը**

Անհատական ուսուցման պլանը ուղեցույց է կամ միջոց ուսուցիչների, դաստիարակների, երեխաների հետ աշխատող մասնագետների և ծնողների համար: Այն օգնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

սովորողներին: ԱՈՒՊ-ը կրթական գործընթացի պլանավորումն է: Այն պետք է ունենա հստակ ձևակերպված վերջնանապատակ, տարեկան նպատակ և կարճաժամկետ խնդիրներ: ԱՈՒՊ-ում անպայման պետք է նշվի, թե որ ծրագրերից է օգտվել խումբը նպատակները և կարճաժամկետ խնդիրները ձևակերպելու համար: Երեխայի մեծանալու հետ փոփոխվում են նրա ուսումնական կարիքները: ԱՈՒՊ -ը պետք է փոխվի ըստ անհրաժեշտության: ԱՈՒՊ-ով ճիշտ աշխատանքը նպաստում է դասի արդյունավետ պլանավորմանը, որն էլ իր հերթին կբերի կրթության որակի բարձրացմանը: Անհատական ուսուցման պլանում ճիշտ նպատակների և վերջնարդյունքների սահմանումը ենթադրում է նպատակաուղղված և համագործակցային աշխատանք: Հանրակրթական դպրոցների կրթական ծրագրերը հաղթահարելու, դասընթացը արդյունավետ կազմակերպելու և կրթական հատուկ կարիքները բավարարելու համար պետք է ուշադրություն դարձնել անհատական ուսուցնման պլանին: Անհատական ուսումնական պլանը ենթադրում է ծնողի հետ համագործաքցային աշխատանք, որն էլ իր հերթին կնպաստի սովորողի կրթական առաջընթացին և կրթության որակի բարելավմանը: Կրթական գործընթացում ծնողի անընդատ ներգրավվածությունը ստիպում է նրան առավել շատ ժամանակ և ուշադրություն հատկացնել իր երեխային: Անհատական ուսուցման պլանը հանդիսանում է մի յուրօրինակ գործիք կրթական գործընթացում որոշակի դժվարություններ ունեցող սովորողների հետ աշխատելիս: ԱՈՒՊ-ով առաջնորդվելիս ուսուցիչների համար անհամեմատ դյուրին կլինի ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատնքն իրականացնելիս: ԱՈՒՊ-ը որպես գործիք ընկալելու պարագայում ուսուցիչները կունենան հստակ ուղղորդում իրենց տվյալ օրվա դասը պլանավորելիս: Այն կարող է օգնել կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող սովորողին՝ միաժամանակ բացարձակ չխանգարելով մյուս սովորողներին:

## *Եզրակացություն*

Այս համակարգում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին բազմակողմանի օգնություն տրամադրելու նպատակով մեծ նշանակություն է տրվում ուսուցիչների համագործակցությանը, քանզի անձնակազմի համագործակցությունը համարվում է որակյալ կրթություն իրականացնելու ամենակարևոր պայմաններից մեկը: Կրթության առանձնահատուկ պայմանները անձի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև՝ մանկավարժական և սոցիալական ծառայությունների ամբողջությունն է: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձը ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձն է, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ: Ցավոք, մեր իրականության մեջ գնալով ավելանում է այն երեխաների թիվը, ովքեր դպրոցում դժվարություններ են ունենում այլ երեխաների հետ շփման մեջ: Երեխաները գնալով ավելի քիչ են շփվում և համագործակցում միմյանց հետ: ԱՈւՊ-ը մշակվում է միայն այն աշակերտի համար, ով ունի կրթության առանձնահատուկ պայմանների առանձնապես խիստ կարիք և առանց անհրաժեշտ ծրագային պարզեցումների և հարմարեցումների չի կարող հասնել իր կրթության նպատակներին: ԱՈւՊ մշակող խումբը ՝ ուսումնական հաստատության տնօրենը, ուսումնական գծով փոխտնօրենը, դաղեկը, ուսուցչի օգնականը, մանկավարժահոգեբանական թիմի անդամները և ծնողը, պետք է աշխատեն փոխհամաձայնեցված: Նրանց սահմանած երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակադրումները պետք է լինեն երկար և համաձայնեցված քննարկումների արդյունքում՝ հաշվի առնելով սովորողի կարողությունների և հմտությունների սահմանը: Անհրաժեշտ է սովորողին, հնարավորության սահմանում, ընդգրկել ԱՈւՊ մշակող խմբում ինչպես այն պլանավորելու ժամանակ, այնպես էլ հետագա քննարկումները կատարելիս:

Մեր կարծիքով ԱՈՒՊ- ները իրենց նպատակին կծառայեն այն դեպքում, երբ բացի սոսկ փաստաթուղթ ընկալվելուց, ԱՈՒՊ-ից օգտվողներն ու գործածողները այն ընկալեն որպես գործիք, որը կհեշտացնի իրենց աշխատանքը ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատելիս:

## *ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ*


1. Խոսքը ներառման մասին է. Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների մատչելիությունը Հայաստանում: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2012թ.
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (ՀՕ-200-Ն):
3. «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 18.02.2016թ. N6 արձանագրային որոշում:
4. https://hmk.am/wp-content/uploads/2020/08/%D4%BF
5. https://innostud.am/application/library/4b0d3123.pdf
6. https://guidebookforteachers.files.wordpress.com/2019
7. https://hmk.am/wp-content/uploads/2021/04/Inclusive-education-report_ARM-without-tools.pdf
8. https://hmk.am/wp-content/uploads/2021/04/dasagirq_nerarakan.pdf